Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

քը») կնքումը Ադրբեջանի պետական նավթային ընկերության և օտարերկրյա նավթային ընկերությունների AIOC կոնսորցիումի միջև, 2. 1994թ. մայիսի 12-ի գինադադարը և 3. 1994-95թթ. Ադրբեջանում ներքին կայունության հաստատումը:

«Դարի գործարքով» փաստորեն Մեծ Բրիտանիան ձեռք բերեց ադրբեջանական նավթահանքերի շահագործման և նավթի արտահանման ոլորտում կայուն երաշխիքներ. այս հանգամանքն արդեն որոշակի առումով փարատում էր նավթի արդյունահանման և արտահանման ծրագրերից դուրս մնալու բրիտանական մտավախությունները և այլևթույլ էր տալիս բրիտանական իշխանություններին՝ չկատարելու երբեմն-երբեմն ստիպված ոչ հայանպաստ հայտարարություններ: Ռազմական գործողությունների ավարտը ազդարարում էր ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Հայաստանում որոշ ներդրումային ռիսկերի վերացում, ինչն էլ խրախուսում էր այս երկրներում բրիտանական ներդրումների ծավալմանը: Մասնավորապես սկսած 1995թ. ինչպես բրիտանական ներդրումային հոսքերը, այնպես էլ հայ-բրիտանական երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունները սկսեցին շեշտակի զարգանալ: Պատերազմական գործողությունների ավարտն ինքնին մեծ դեր ունեցավ Ադրբեջանի ներքաղաքական կայունության հաստատման գործում: Դե, իսկ Ադրբեջանում ներքին կայունության հաստատումը իրատեսական չէր դարձնում շրջադարձային փոփոխությունները այդ պետության արտաքին քաղաքականության բնագավառում, ինչից կարող էին տուժել արևմտյան, մասնավորապես բրիտանական նավթային շահերն այս երկրում:

Ակտիվ հարթությունում
«Հայկի սերունդ» ԵՀԿ

ԼՂՀ հռչակման իրավական հիմքերը

Խոսելով ԼՂՀ անկախության մասին, հարկ է հետադարձ հայացք ձգել դեպի 1988թ., որը շրջադարձային տարի դարձավ Արցախ աշխարհի համար:

1988թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ մարզխորհրդի 20-րդ գումարման նստաշրջանը, երկրի Սահմանադրությանը համապատասխան, որոշում ընդունեց դիմել Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու մասին:

Ինչպես տեսնում ենք, նստաշրջանը, պահպանելով իրավական ձևը, դիմել է խնդրանքով, մինչդեռ Ադրբեջանում խնդրին ռազմաուժային ընթացք են տվել:

Փետրվարի 22-ին ադրբեջանաբնակ Ադդամի շրջանի մի քանի հազար մարդուց բաղկացած ամբոխը շարժվել է դեպի Ստեփանակերտ իրենց բնութագրմամբ «դաստիարակչական նպատակներով», իսկ փետրվարի 27-ին սկսվել է հայերի ցեղասպանությունը Սումգայիթում և հայկական տների ավերումը Կիրովաբադում (Գյանջա):

1991թ. օգոստոսի 30-ին Բաքվում ընդունվեց Պետականության վերականգնման մասին հռչակագիրը, որով Բաքուն հրաժարվում էր ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից և վերականգնում 1918-1920թթ. գոյություն ունեցած Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության պետականությունը:

Ստեփանակերտն անմիջապես արձագանքեց Բաքվին և 1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ:

Նստաշրջանը, արտահայտելով Արցախի ժողովրդի կամքը, ընդունեց **«Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»**: Դրանով արցախահայությունը կրկին հաստատեց ազատության համար մինչև վերջ պայքարելու իր վճռականությունը:

Հարկ է ուշադրություն դարձնել, որ Հռչակագիրը հիմնվում է.

1. **ԽՍՀՄ Սահմանադրության և օրենքների վրա.**

«հիմնվելով ԽՍՀՄ գործող Սահմանադրության և օրենքների վրա, որոնք ինքնավար կազմավորումներին (ինքնավար հանրապետություններին, մարզերին և օկրուգներին), ինչպես նաև համահավաք ապրող ազգային խմբերին իրավունք են տալիս պետական-իրավական կարգավիճակի հարցի ինքնուրույն լուծում ԽՍՀՄ կազմից դուրս գալու դեպքում»,

2. **Միջազգային իրավունքի վրա.**

«հարգելով և հետևելով Մարդու իրավունքների մասին Համընդհանուր Հռչակագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և հույս ունենալով միջազգային հանրության ըմբռնման ու աջակցության վրա»:

Այժմ ծանոթանանք միջազգային այն կարևոր փաստաթղթերի հետ, որոնց հղում է Հռչակագիրը.

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդված 2-րդ.

«Բոլոր ազգերն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում են իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»:

Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 1-ին հոդվածում նշված են նույն դրույթներն, ինչը վերոհիշյալ հոդվածում:

Հռչակագիրը հղում է նաև միջազգային իրավունքին ոչ միայն այն պատճառով, որպեսզի հիմնավորի իր ինքնորոշման իրավունքը: Երեք տարուց ավելի գտնվելով շրջափակման մեջ, ղարաբաղյան պատգամավորները միջազգային հանրության կողմից օգնության և աջակցության հույս ունեին: Առավել ևս նրանց այդ հույսը հիմավորված է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 3-րդ հոդվածում. «Սույն դաշնագրին մասնակցող բոլոր պետությունները, այդ թվում նաև նրանք, որոնք պատասխանատվություն են կրում ինքնավար և խնամարկյալ տարածքների կառավարման համար, ՄԱԿ-ի Կանոնադրության նորմերի համաձայն, պետք է խրախուսեն ինքնորոշման իրավունքի կենսագործումը և հարգեն այդ իրավունքը»:

Սույն պահանջը բառացիորեն կրկնվում է **քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 3-րդ հոդվածում:**

«Գաղութային երկրներին և ազգերին անկախություն շնորհելու մասին» հռչակագիրը հայտարարում է.

«ցանկացած տեսակի ռազմական գործողություններ կամ պատժիչ միջոցներ (ինչ բնույթի էլ որ լինեն) ուղղված կախյալ ազգերի դեմ, պետք է դադարեցվեն, որպեսզի նրանց հնարավորություն տրվի խաղաղության ու ազատության պայմաններում իրականացնելու անկախության իրենց իրավունքը, իսկ իրենց տարածքային ամբողջականությունը պետք է հարգվի» :

1991թ. սեպտեմբերի 2-ի տրամաբանական շարունակությունը 1991թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ-ում տեղի ունեցած համաժողովրդական հանրաքվեն էր ԼՂՀ կարգավիճակի մասին: Քվեարկությանը մասնակցած մարդկանց 99,89 % - ը դրական է քվեարկել հանրաքվեի ժամանակ:

Հանրաքվեին մասնակցելու էին եկել տարբեր պետություններից ժամանած դիտորդներ և ՁԼՄ-ների ներկայացուցիչներ: Նրանց կողմից կազմված **«ԼՂՀ անկախության հանրաքվեի արդյունքների մասին»** ակտում մասնավորապես նշված էր.

«Քվեարկության, քվեաթերթիկների տրման, դրանց ձևակերպման, ծայների հաշվառման ընթացքում դիտորդները որևէ խախտում չեն հայտնաբերել»:

«Դիտորդները անհրաժեշտ են համարում նշել, որ հանրաքվեն անց է կացվել ԼՂՀ-ի նկատմամբ գինված հարձակման պայմաններում, որը տեղի է ունենում անընդհատ գնդակոծվող Ստեփանակերտ քաղաքում և մյուս բնակավայրերում տարբեր տեսակի զենքի կիրառմամբ՝ ներառյալ հրթիռներ և հրետանի: Քվեարկության օրը գնդակոծությունից մահացել է 10 հայ, վիրավորվել՝ 11-ը: Ստեփանակերտ քաղաքի կանանց և երեխաների մեծամասնությունը գիշերում են նկուղներում, փակված են մանկապարտեզները, մտուրներն ու դպրոցները: Դեկտեմբերի 11-ի լույս 12-ի գիշերը Ստեփանակերտի դպրոցներից մեկում հրետանային արկ է ընկել: Պայթեցված է քաղաքային ջրմուղը, հաց ու դեղամիջոցներ չկան»:

Այսպիսի դժվարին պայմաններում է ծնունդ առել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Ղարաբաղյան հիմնախնդրի քաղաքակիրթ լուծումը պետք է լինի միջազգային իրավունքի նորմերի պահանջների կիրարկումը: Ուսումնասիրելով Ղարաբաղյան հակամարտության պատմությունը և ելնելով միջազգային իրավունքի նորմերից, մենք կարող ենք արձանագրել, որ

1. Մինչև 1992թ. աշխարհում գոյություն չուներ ինքնիշխան, միջազգային հանրության կողմից ճանաչված Ադրբեջանական Հանրապետություն,

2. Լեռնային Ղարաբաղի մասը (ԼՂԻՄ) 1921-1991թթ. հանդիսանում էր ազգային-պետական կազմավորում ԽՍՀՄ-ի կազմում,ընդ որում, 1921թ. հուլիսի 5-ի Կոմբյուրոյի որոշումով է ԼՂ-ն լայն ինքնավարության կարգավիճակով հայտնվել ԱդրԽՍՀ սահմաններում: Այլ իրավական հիմքեր չկան, որոնք հաստատեն ԼՂ հայտնվելը ԱդրԽՍՀ սահմաններում: Այն օրինական չէր, քանի որ երրորդ երկրի (Ռուսաստան) կուսակցական մարմինը իրավասու չի եղել մի երկրի տարածքը մեկ ուրիշին հանձնելու:

3. Ինքնորոշվելով 1991թ. միջազգային և միութենական իրավունքի նորմերի խախտումով, Ադրբեջանի Հանրապետությունը կոպիտ

կերպով ոտնահարել է իր տարածքում համահավաք ապրող ազգերի (թալիշների, լեզգիների, ավարների) իրավունքները,

4. ԼՂՀ հռչակման օրինականությունը ապահովված է 1990թ. ապրիլի 3-ին ընդունված «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքով, ինչը ինքնավար կազմավորումներին հնարավորություն էր ընձեռում ինքնորոշվելու որպես միութենական դաշնության ինքնուրույն սուբյեկտներ ընդհուպ մինչև ԽՍՀՄ-ից անջատվելու հարց բարձրացրած միութենական հանրապետության կազմից դուրս գալը»: Այստեղից պարզ հետևում է, որ ԼՂՀ ինքնորոշումը տեղի է ունեցել միութենական իրավական նորմերին խիստ համապատասխան և վերանայման ենթակա չէ, ընդ որում, գոյություն չունի որևէ փաստ կամ փաստարկ, որը կասկածի տակ դնի ԼՂՀ կայացման օրինականությունը

5. ԼՂՀ-ն 1991թ. ինքնորոշվել և դուրս է եկել ոչ թե Ադրբեջանական ԽՍՀ-ի, այլ ԽՍՀՄ-ի կազմից, քանի որ 1991թ. սեպտեմբերի 2-ի պատմական որոշումներում ԼՂՀ-ի տարածքում ճանաչվում էին ԽՍՀՄ օրենքները, այսինքն ԼՂՀ-ն, համաձայն 1990թ. ապրիլի 3-ի օրենքի, վճռել էր ոչ թե Ադրբեջանի հետ, այլ ինքնուրույն դուրս գալ ԽՍՀՄ-ից:

6. Ինքնորոշված ԼՂՀ-ի նկատմամբ զինված հարձակում իրականացնելով, Ադրբեջանի Հանրապետությունը կոպիտ կերպով խախտել է միջազգային իրավունքի հոդվածների մի ամբողջ շարք, այդ թվում նրա համար իմպերատիվ (իշխանական) և պարտավորական,

7. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հետ կապված բանակցությունները պետք է ընթանան միջազգային լիիրավ իրավասուբյեկտ հանդիսացող ԼՂՀ-ի հետ հաշվի նստելով:

8. Ոչ դե-յուրե, ոչ դե-ֆակտո, ոչ պատմականորեն և ոչ էլ աշխարհագրորեն Լեռնային Ղարաբաղը երբևիցե մաս չի կազմել «Ադրբեջան» կոչված պետության կամ տարածքի:

9. 1991թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ԼՂՀ-ն մինչև Ադրբեջանական Հանրապետության միջազգային ճանաչումը կայացել է վերջինիս չպատկանող տարածքներում և այսօր էլ վերահսկում է նման տարածքներ: Այդ տեսակետից հիմնախնդրի կարգավորումը որևէ կապ չունի տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման սկզբունքների հակասության հետ:

10. ԼՂԻՄ-ը նրա տնտեսական, քաղաքական, հասարակական կառույցները, ԱդրԽՍՀ ենթակայությունից դուրս են բերվել դեռևս ԽՍՀՄ օրոք 1989թ., երբ մարզում մտցվել է հատուկ կառավարման

համակարգ: Այդ կարգավիճակը մարզի ժամանակագրորեն վերջին կարգավիճակն էր ԽՍՀՄ օրոք: ԽՍՀՄ լուծարման պահին մարզը դե-ֆակտո դուրս բերված էր ԱդրԽՍՀ վարչական ենթակայությունից:

11. Իրավական տեսակետից հատկապես կարևոր է այն փաստը, որ ԼՂՀ-ն լեգիտիմ կայացել է մինչև Ադրբեջանի Հանրապետության միջազգային ճանաչումը:

1991թվականի սեպտեմբերի 2-ին «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» հռչակագրի ընդունումը տարիների ընթացքում լոկ հաստատեց ազատության ու անկախության ուղին ընտրած Արցախի ժողովրդի կամքն արտահայտող այդ համարձակ քաղաքական որոշման պատմական անհրաժեշտությունը և այն դարձավ ճակատագրական իրադարձություն Արցախի բազմադարյան պատմության մեջ:

Արժե առանձնապես ընդգծել, որ սկսված պատերազմի, պաշարման վերաճած շրջափակման, Ադրբեջանի կողմից աննախադեպ ճնշման պայմաններում բոլոր քայլերը ձեռնարկվել են նախկին ԽՍՀՄ օրենսդրությանը, ինչպես նաև միջազգային իրավունքի նորմերին խիստ համապատասխան: Այդ քաղաքական որոշումը հեռանկարում նպատակ ուներ վերականգնել նաև պատմական արդարությունը, որը կայանում է Հայաստանի հետ վերամիավորվելու բնական ձգտման մեջ:

Սիեր Հարությունյան
«Կանաչ» գիտական կենտրոն

ԼՂՀ պաշտպանության բանակի կազմավորման պատմությունից

Արցախյան շարժումը նշանավորվել է ռազմաքաղաքական մի շարք հաղթանակներով, որոնք մտել են հայոց բազմադարյան պատմության արդի փուլի, հատկապես հայ ազգային ազատագրական պայքարի տարեգրության մեջ: Կարևոր ձեռքբերումը ԼՂՀ պաշտպանության բանակի(ՊԲ) կազմավորումն էր: Մի քանի փուլ անցած այդ գործընթացի առանձնահատկությունն այն է, որ կամավորական-աշխարհազորային ջոկատների վերաճումը կանոնավոր զորամասերի տեղի էր ունենում մարտական գործողություններին զուգահեռ, Արցախի դեմ Ադրբեջանի ձեռնարկած ագրեսիայի ծանր պայմաններում: Ուստի, ռազմապաշտպանական եւ բանակային ենթակառուցվածքների ստեղծման խնդիրները հաճախ բխում էին հենց կյանքի ու դաժան իրականության պահանջներից: Ակնհայտ է, որ կանոնավոր ու մարտունակ բանակի կազմավորումը թելադրված էր նյութական ու

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ